ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի նոյեմբերի 29-30-ը Ռուսաստանի Դաշնություն /Մոսկվա/
գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Արման Ուդումյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Ռուսաստանի Դաշնություն /Մոսկվա/, 29-30-ը նոյեմբերի, 2018թ.

4. **Հրավիրող կողմը.**
   Աշխատանքի միջազգային կազմակերպության Արժանապատիվ աշխատանքի տեխնիկական աջակցության թիմի և Արևելյան Եվրոպայի ու Կենտրոնական Ասիայի մոսկովյան գրասենյակ

5. **Գործուղման նպատակը** */աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/.*
   - համաձայնեցնելու «Արժանապատիվ աշխատանք» քառամյա ազգային ծրագրի առաջնահերթություններից բխող աշխատանքային պլանի բաղադրիչները,
   - քննարկելու աշխատանքային իրավունքների պաշտպանության նկատմամբ վերահսկողության ամբողջական համակարգի ներդրման և աշխատանքային օրենսգրքի փոփոխությունների վերաբերյալ հարցերը,
   - համաձայնեցնելու Զբաղվածության 2019-2023թթ. ռազմավարության մշակմանն ուղղված Աշխատանքի միջազգային կազմակերպության /այսուհետ՝ ԱՄԿ/ աջակցության ձևաչափը:

6. **Քննարկված թեմաները.**
   «Արժանապատիվ աշխատանք» քառամյա ազգային ծրագրի շրջանակներում.
   - առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող անձանց ուղղված ծրագրերի մշակում,
   - մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ ճանաչողական, ուսուցողական և խորհրդատվական նյութերի մշակում դպրոցի ավագ դասարանների,

ուսանողների և Զբաղվածության պետական գործակալության մասնագետների համար,

- աշխատանքային օրենսգրքի (աշխատանքային իրավունքների, առողջության և անվտանգ աշխատանքի) պրակտիկ մեկնաբանությունների մշակում ձեռնարկների և «հաճախակի տրվող հարցերի» ձևաչափով գործատուների և աշխատողների համար,
- աշխատաշուկայի ակտիվ ծրագրերի, ստվերային (չգրանցված) զբաղվածության վերաբերյալ հետազոտությունների անցկացում և միջազգային հաջողված փորձի ուսումնասիրություն,
- սոցիալական գործընկերների (պետություն, գործատուներ, արհմիություններ) միջև գործող եռակողմ համաձայնագրի բովանդակության բարելավում:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**
   - Օլգա Կուլաևա, Արժանապատիվ աշխատանքի տեխնիկական աջակցության թիմի և Արևելյան Եվրոպայի ու Կենտրոնական Ասիայի մոսկովյան գրասենյակի տնօրեն,
   - Վալենտին Մոկանու, Աշխատանքի տեսչության, առողջ և անվտանգ աշխատանքի ավագ մասնագետ,
   - Միխաիլ Պուշկին, Զբաղվածության ավագ մասնագետ,
   - Յասմինա Պապա, Սոցիալական պաշտպանության մասնագետ,
   - Լեջո Սիբել, Աշխատանքային ստանդարտների և աշխատանքային իրավունքի ավագ մասնագետ,
   - Վլադիմիր Կուրովիչ, Գործատուների հետ տարվող աշխատանքների գծով ավագ մասնագետ:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**
   - ԱՄԿ աջակցությամբ 2013-2018թթ. Զբաղվածության ռազամավարության գնահատումից հետո շարունակելու աջակցությունը նոր՝ Զբաղվածության 2019-2023թթ. ռազմավարության մշակման աշխատանքներին,
   - աջակցություն ՀՀ կառավարության ենթակայությամբ գործող Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի աշխատանքային իրավունքների նկատմամբ վերահսկողական գործառույթներով օժտելու աշխատանքերին,
   - փորձագիտական աջակցություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից Աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու գործընթացին:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

«Արժանապատիվ աշխատանք» ազգային քառամյա ծրագրի ստորագրման արարողությունը 2019 թվականի ապրիլի 30-ին կամ մայիսի 13-ից 17-ն ընկած ժամանակահատվածում կազմակերպելը, որին կմասնակցի նաև ԱՄԿ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի տնօրենը: Պատասխանատուները՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ԱՄԿ Մոսկվայի գրասենյակ, ԱՄԿ ազգային համակարգող:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը.**

05.12.2018թ.